ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4.

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

28 հունվարի 2022թ.

Նախագահ Մ.Ա.Զաքարյան

Քարտուղար Ք.Վ.Օթարյան

Ներկա էին խորհրդի 12 անդամներից 11 անդամները:

Նիստի օրակարգը ներկայացրեց Մ. Զաքարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաղորդում 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների մասին:

/զեկ. Մ.Ա.Զաքրյան/

2. Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի և աշխատանքների կատարման ժամանակացուցների հաստատում:

/զեկ. Ամբիոնների վարիչներ Ա.Ս.Հովակիմյան, Գ.Ս.Սիմոնյան/

3. 2021-2022ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ակադեմիական պարտքերի վերահանձնման ժամանակացույցների հաստատում:

/զեկ. Մ.Ա.Զաքրյան/

4. Ֆակուլտետի ուստարվա գործունեության աշխատանքային պլանից բխող ֆակուլտետի 2-րդ կիսամյակի գործունեության աշխատանքային պլանի հաստատում:

/զեկ. Մ.Ա.Զաքրյան/

5. 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի անվա նական կրթաթոշակների թեկնածուների առաջադրում:

/զեկ. Մ.Ա.Զաքրյան/

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ.Ա.Զաքարյան:

Առցանաց քվեարկությամբ՝ 11 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝4/1

- **Հաստատել նիստի օրակարգը:**

Օրակարգի առաջին՝ «Հաղորդում 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների մասին » հարցի վերաբերյալ Մ.Զաքարարյանի հաղորդումը հետևյալն էր.

-Երկրորդ կիսամյակը սկսվում է փետրվարի 8-ից ավարտվում է հունիսի 4-ին: Դասախոսությունները, գործնական և լաբորատոր դասերը կանցկացվեն համալսարանում:

Դասաժամերը բաշխված են առանց բացառության: Դաացուսակը բերված է ավարտուն տեսքի :

Բաց քվեարկությամբ՝ 11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ՈՐՈՇՈՒՄ 4/2

Ընդունել ի գիտություն:

Օրակարգի երկրորդ հարցի՝ « Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի և աշխատանքների կատարման ժամանակացուցների հաստատում», վերաբերյալ հաղորդում ունեցան ամբիոնների վարիչներ Ա.Ս.Հովակիմյանը, Գ.Ս.Սիմոնյանը: Ա.Հովակիմյանի հաղորդումը հետևյալն էր.

-Ի/ԿՄ կրթական ծրագիրը պարբերաբար վերանայվում է: 18-22, 21-25 ուս.տարիների համար ներառվել է հետազոտական բաղադրիչ, վերանայվել են առարկայական ծրագրերի մասնագրերը, առարկայական ծրագրերում տեղի են ունեցել որոշ փոփոխություններ:

Աշխատանքների ցանկը հետևյալն է. 1. Կրթական ծրագրից դասախոսների և ուսանողների բավարարվածության վերլուծություն:

2. Շրջանավարտների տեղաբաշխման վերլուծություն (Կարիերայի բաժնի հետ համատեղ):

3. Շրջանավարտների և գործատուների հարցման արդյունքների վերլուծություն:

4. Կրթական ծրագրի վերջնարդյունքների ձեռքբերման վերլուծություն:

5. Առաջատար բուհերի (ԵՊՀ, ՀՌՀ, ՄՊՀ) կրթական ծրագրերի բենչմարքինգ. Լավագույն փորձի ներդրում և կիրառում:

6. Առցանց դասավանդման, ուսումնառության, գնահատման մեխանիզմների ներառում կրթական ծրագրում: e-learning հարթակի օգտագործում:

7. 2021-2025 ուս. Տարիների համար "ԻԿՄ կրթական ծրագրի" բավանդակության վերջնականացում:

Կազմվել է "Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա" կրթական ծրագրի վերանայման ժամանակացույց, որը ներկայացնում եմ գիտ.խորհրդի հաստատմանը: /Տես հավելված 2/:

Գ.Սիմոնյանի հաղորդումը հետևյալն էր. 5 – Կրթական ծրագրերի շեղումը չպետք է գերազանցի ԵՊՀ-ի համապատասխան կրթական ծրագրերի 10%: ԵՊՀ ԻՄ-ի կրթական ծրագրերը հիմնականում համապատասխանում են ԵՊՀ-ի կրթական ծրագրերին:

ԲԱՑ բաց քվեարկությամբ՝ 11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ՈՐՈՇՈՒՄ 4/3

Հաստատել կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի եվ աշխատանքների կատարման ժամանակացույցը:

Օրակարգի երրորդ « 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ակադեմիական պարտքերի վերահանձնման ժամանակացույցների հաստատում»

Հարցի վերաբերյալ Մ.Զաքարյանը ներկայացրեց հետևյալը.

I լուծարքային շրջանը փետրվարի 4-12

II լուծարքային շրջանը փետրվարի 18-26

Լուծարք ունեցող ուսանողների քանակը բավականին մեծ է, մի մասը քննություններին չեն մասնակցել վճար չմուծելու պատճառով, մյուսները եղել են անպատրաստ:

Լուծարքները անցկացվելու են հանձնաժողովով: Հանձնաժողովի կազմը ներկայացվել է տնօրենի հաստատմանը:

Բաց բաց քվեարկությամբ՝ 11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ՈՐՈՇՈՒՄ 4/4

Ընդունել ի գիտություն:

Օրակարգի չորրորդ հարցի՝ «Ֆակուլտետի ուստարվա գործունեության աշխատանքային պլանից բխող ֆակուլտետի 2-րդ կիսամյակի գործունեության աշխատանքային պլանի հաստատում», վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի ժ/պ Մ.Զաքարյանի զեկույցը ներկայացվում է ստորև.

-Գիտ.խորհրդի օրինակելի պլանը վերանայվել և ուղարկվել է հաստատման: Նոր կարճաժամկետ ռազմավարական պլանը դեռևս հաստատված չէ: Ա.Մակարյանի կողմից ստացել ենք առաջադրանք, դուրս գրել այն խնդիրները, որոնք չեն իրականացվել կամ մասամբ են իրականացվել, դուրս գրել և մշակել աշխատանքային պլանի նոր տարբերակ, որը ներառվել է 2022թ հունվար-հուլիս ամիսների գործընթացներում և ֆակուլտետը ներառել իր պլանում:

Բաց քվեարկությամբ՝ 11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ՈՐՈՇՈՒՄ 4/5

Ախատանքային պլանը ներկայացնել հաստատման:

Օրակարգի հինգերորդ հարցի՝ «Ֆակուլտետի 2021-2022ուս. տարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակների հավակնորդ ուսանողների թեկնածության քննարկում», վերաբերյալ Մ.Զաքարյանը նշեց, որ Բնական գիտությունների ֆակուլտետի «Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)» մասնագիտության Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» բակալավրի կրթական ծրագրի անվճար ուսուցման համակարգի

երրորդ կուրսի ուսանողուհիներ Մարիամ Արմանի Ղազումյանը երկու կիսամյակ, Հասմիկ Լևոնի Ստեփանյանը չորս կիսամյակ, Երկրորդ կուրսի ուսանողուհի Իննա Հրայրի Հարությունյանը երկու կիսամյակ անընդմեջ սովորում են գերազանց: Մ.Զաքարյանը առաջարկեց Իննա Հարությունյանին ներկայացնել «ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ» Մարիամ Ղազումյանին «ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ», իսկ Հասմիկ Ստեփանյանին «ՀԱՄԼԵՏ ԿԱՐԱՅԱՆ» անվանական կրթաթոշակների: ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - «Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» ամբիոնի վարիչի ԺՊ, տեխ.գ.թ., դոցենտ, կրթական ծրագրի ղեկավար Ա.Հովակիմյանը ներկայացրեց, որ Հասմիկ Ստեփանյանը, Մարիամ Ղազումյանը, Իննա Հարությունյանը աշխատասեր, ակտիվ, պատասխանատու ուսանողներ են, գտնում է, որ արժանի են անվանական կրթաթոշակ ստանալուն:

Բաց քվեարկությամբ՝ 11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվց

ՈՐՈՇՈՒՄ 4/6

Երաշխավորել և ներկայացնելել «ՀԱՄԼԵՏ ԿԱՐԱՅԱՆ» անվանական կրթաթոշակի Հասմիկ Ստեփանյանին,

«Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի

Մարիամ Ղազումյանին

«ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ» անվանական կրթաթոշակի Իննա Հարությունյանին

և ներկայացնել մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ